վրայ: Այդ խօսքերի հետ Կարօյի հրացանը որոտում է, եւ աւազկապետի գդակը թռչում է գլխից:

Նա դարձեալ մնում է իր յամառութեան մէջ:

Կարօն միւս անգամ ձայն է տալիս՝ երեւի պարոն աւազակապետի գդակը մեծ կորուստ չէր իր համար, բայց նա դարձեալ խնայում է նրա անձին, եւ այս անգամին իր գնդակը դիպցնում է նրա ձիու աջ ականջին: Հրացանը երկրորդ անգամ որոտում է եւ աւազակապետի ձին գլորւում է գետին, իր տիրոջն եւս իր տակովն առնելով:

Կարօյի օրինակին հետեւում են նրա եւ միւս ընկերները. Ասլանը իր հրացանի գնդակին նպատակ է ընտրում մէկի մտրակը, որ վայր էր դնում առանց տիրոջ ձեռքը վնասելու: Սագօն խփում է մէկի ձիու թամքի դաշին: Ծերունի որսորդը խիստ ճարպիկ կերպով թռցնում է մէկի նիզակի ծայրը: Աւազակների կողմից ամենայն ջանք անցնում է իզուր, որովհետեւ Կարօն իր ընկերների հետ պատսպարուած են լինում ժայռերի ետեւում, որոնք բարձր կանգնած էին կիրճի վրայ: Կռիւը տեւում է կէս ժամ: Աւազակները դեռ չեն կամենում անձնատուր լինել:

— Տղերք, — ասում է Կարօն, — պէտք է մի փոքր ճանկռտել դրանց:

Եւ սկսում են այնուհետեւ իրանց գնդակները դիպցնել մէկի ձեռքին, միւսի ոտին, երրորդի ականջին, մի խօսքով, մարմնի այն մասերին, որոնց վէրքը մահացուցիչ չէր կարող լինել:

Աւազակները ստիպւում են թողնել աւարը:

Կարօն յայտնում է՝ թէ նրանք պէտք է թողնեն իրանց ձիերից չորսը, որովհետեւ ինքն իր ընկերների հետ ոտով եկած են եւ բաւականին յոգնած են, եւ թէ, ոչխարներն իրանց տէրերին հասցնելեն յետոյ, ինքը Կարօն խոստանում է ետ դարձնել նրանց ձիերը, որոնց կը գտնեն այնինչ տեղում, որ նշանակում է Կարօն: Աւազակները յօժարւում են եւ այդ առաջարկութեանը:

Այնուհետեւ Կարօն յայտնում է՝ թէ աւազակները պէտք է այնքան ժամանակ մնան կիրճի մէջ, մինչեւ իր ընկերները հոտերը կը դարձնէին եւ բաւականին կը հեռացնէին այնտեղից: Աւազակներն ընդունում են եւ վերջին պայմանը:

Կարօն ծերունի որսորդի հետ մնում են պահելու կիրճի ելքը, իսկ Ասլանը Սագօյի հետ հեծնում են աւազակների թողած ձիաները եւ դարձնում են հոտերը: Երբ նրանք բաւականին հեռացած են լինում, Կարօն բաց է թողնում աւազակներին: